

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

### ՄԱՐԴՈՒ ԻՄՈՒՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԻՐՈՒՍԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ

*Ընդունվել է 03.02.97թ.*

#### **Հոդված 16. ՄԻԱՎ-ով վարակված անձի պարտականությունները**

ՄԻԱՎ-ով վարակված անձը կամ նրա օրինական ներկայացուցիչը պարտավոր է իրականացնել ՄԻԱՎ-ի տարածումը բացառող լիազորված պետական մարմնի կողմից հաստատված նախազգուշական միջոցառումները:

***(16-րդ հոդվածը փոփ. 19.03.09 ՀՕ-63-Ն)***

## **ՑԱՆԿ**

### **ՄԻԱՎ -ի տարածումը բացառող նախազգուշական միջոցառումների**

Մարդու իմունային անբավարարության վիրուսով (այսուհետ՝ ՄԻԱՎ) վարակված անձը պարտավոր է իրականացնել ՄԻԱՎ-ի տարածումը բացառող ներքոնշյալ նախազգուշական միջոցառումները.

1. ՄԻԱՎ-ի նկատմամբ իր կարգավիճակի մասին տեղեկացնել զուգընկերներին և համատեղ թմրամիջոցներ գործածած անձանց:
2. Սեռական բոլոր հարաբերությունների ժամանակ օգտագործել պահպանակ:
3. Չփոխանցել ուրիշներին իր ներարկիչները, ասեղները, տեսանելի արյան հետքերով անձնական հիգիենայի և այլ պարագաներ:
4. Չլինել արյան, կենսաբանական հեղուկների, հյուսվածքների և օրգանների դոնոր:
5. Հղիության պլանավորումը համաձայնեցնել դիսպանսերային հսկողությունն իրականացնող բժշկի հետ՝ մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելման նպատակով:
6. Բժշկական օգնություն ստանալու համար բժշկական կազմակերպություններ դիմելիս բուժաշխատողներին տեղեկացնել ՄԻԱՎ-ի նկատմամբ իր կարգավիճակի մասին:
7. Դիսպանսերային հսկողությունն իրականացնող բժշկի կողմից սահմանված ժամկետներում ներկայանալ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն՝ անհրաժեշտ հետազոտություններ անցնելու նպատակով:
8. Ապահովել ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից ծնված երեխաների հետազոտությունների անցկացումը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ՄԻԱՎ-ի նկատմամբ նրանց կարգավիճակը ճշտելու և անհրաժեշտ բժշկական օգնություն տրամադրելու նպատակով:
9. Խստորեն պահպանել հակառետրովիրուսային դեղերի ընդունման կարգը:
10. Դիսպանսերային հսկողությունն իրականացնող բժշկին տեղեկացնել իր բնակության վայրի և ընտանեկան դրության փոփոխության մասին: